Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
„13„ փետրվարի 2013 թվականի N 03-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

2013 – 2016ԹԹ.

Կազմեց Օձուն համայնքի ղեկավար՝ Ա. Տիտանյանը

Հաստատվել է համայնքի ավագանու 2013 թ. փետրվարի 13-ի N 3-Ն որոշմամբ

2013թ.
գ. Օձուն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ուղերձը
2. Ի՞նչ է քառամյա ծրագիրը---------- 3
3. Համայնքի նկարագիրը---------- 4
4. Սոցիալ –տնտեսական նկարագիր---------- 5
5. Համայնքի ռազմավարությունը եւ հիմնական նպատակները-----17
6. Համայնքի ֆինանսական միջոցների վերլուծություն եւ կանխատեսում ---------- 20
7. Իրականացվելիք միջոցառումների սահմանում եւ տարեկան միջոցառումների պլանավորում----------21

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

1.1. Սիրելի համագյուղացիներ.

Ձեր եմ ներկայացնում Օձուն համայնքի 2013-2016թթ. սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը: Հայցում եմ Ձեր աջակցությունը և ակտիվ մասնակցությունը քառամյա ծրագրով նախատեսված ծրագրերի իրականացման հարցում: Հույս ունեմ համատեղ ուժերով այս չորս տարիների ընթացքում կկարողանանք իրականացնել համայնքի առջև դրված խնդիրները:

1.2. Ի՞նչ է քառամյա ծրագիրը

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը ձեւավորվել է համայնքի ղեկավարի նախընտրական ծրագրային դրույթների, համայնքի հնարավորությունների ու ներուժի գնահատման, կառավարության եւ միջազգային ու տարածաշրջանային կազմակերպություններից սպասվելիք ծրագրերի, տեղական հարկերից եւ տուրքերից գոյացող գումարների նախնական բաշխումների, համայնքից դուրս գտնվող օձունցիների կողմից նախատեսվող օգնությունների նպատակային օգտագործման հիման վրա:

Քառամյա սույն ծրագիրը իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության եւ առկա մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը եւ նպատակային բյուջետավարման գործընթացի հստակ իրականացումը:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1. Աշխարհագրական դիրքն ու բնակլիմայական պայմանները

Օձուն գյուղը գտնվում է Դեբեդի կիրճի ձախափնյա բարձրադիր սարավանդի վրա, Ալավերդի քաղաքից 8 կմ հարավ-արեւմուտք: Օձունը հանրապետության մեծ գյուղերից է, իսկ Լոռու մարզի ամենամեծ գյուղը: Այն գտնվում է Երեւանից 170 կմ, իսկ մարզկենտրոն Վանաձորից 50 կմ հեռավորության վրա՝ հանրապետության հյուսիսային մասում: Համայնքի մակերեսը 5.2 քառակուսի կմ է: Համայնքը գտնվում է Լոռու մարզի վարչական տարածքի մեջ: Օձուն համայնքի վարչական տարածքի մեջ է մտնում նաեւ Ամոջ գյուղը: Օձունն աչքի է ընկնում բարենպաստ մեղմ կլիմայով, որը պայմանավորված է նրա տարածքի մակերեւույթի համեմատաբար ոչ մեծ բարձրությամբ՝ 1000-1100 մ ծովի մակարդակից: Գյուղի արեւմտյան մասն անտառապատ է, սակայն էներգետիկ ճգնաժամի տարիներին՝ 1991-1995թթ.-ին, այն խիստ տուժել է ապօրինի ծառահատումներից: Խորհրդային տարիներին գյուղի բնակչության հիմնական զբաղվածությունը եղել է արտադրական ձեռնարկություններում, որի պատճառով նրանք վերջին 20 տարիներին չեն համակերպվել նոր տնտեսվարմանը: Այդ է հիմնական պատճառը, որ համայնքի մեծաքանակ հողերը մնացել են անմշակ եւ մարդիկ չեն պատկերացնում, որ հողագործությունն ու ֆերմերային տնտեսությունների ձեւավորումը նույնպես զբաղվածության խնդրի լուծում է:

2.1. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Օձունը Հայաստանի հնագույն բնակավայրերից է, աչքի է ընկնում պատմական եւ ճարտարապետական հուշարձանների առատությամբ. այդ մասին են վկայում IV դարում կառուցված Ս. Աստվածածին եկեղեցին, V դարում կառուցված Ծիրանավոր Ծաղկավանք, VII դարում կառուցված Հոռոմայրի վանական համալիրը, ինչպես նաեւ

գյուղի տարբեր վայրերում կառուցված եւ տեղադրված բազմաթիվ խաչքարերն ու մատուռները:

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

3.1. Ժողովրդագրություն

Համայնքի բնակչությունը

	Տարիքային խմբեր	Ընդամենը	տղամարդիկ	Կանայք
	0-6 տարեկան	287	156	131
	7-17 տարեկան	589	322	267
	18-60 տարեկան	3868	1878	1990
	Ընդամենը	4744	2356	2388

Բնակչության սոցիալական կազմը

Սոցիալական կազմը	Քանակը
կանայք	2644
տղամարդիկ	2667
կենսաթոշակառուներ	940 (որից 540-ը կին)
փախստականներ	
միակողմանի ծնողազուրկ երեխաներ	20
հայրենական պատերազմի մասնակիցներ	9
մանկուց հաշմանդամներ	11
արտագնա աշխատանքի մեկնողներ	1000
աշխատանք ունեցողներ	500
գործազուրկներ	

ընտանիքների (ծխերի) թիվը	1450
«Փարոս» ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ	139
զոհվածների ընտանիքներ	1

3.1. ՀԱՄԱՅԱՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Գյուղի ասֆալտապատ ճանապարհների տեսակարար կշիռը 4-5% է, գազիֆիկացված տների տեսակարար կշիռը՝ 60%, խմելու ջուր ունեցող տներինը՝ 60%, ընդհանուր հողատեսքերի 40%-ը ոռոգվում են, հեռախոսակապ ունեցող ընտանիքների տեսակար կշիռը՝ 40%: Գյուղն ապահովված է խմելու ջրով, գազիֆիկացված է, գործում են հեռախոսկապի բոլոր օպերատորները: Գյուղում իրենց ծառայություններն են մատուցում Հայփոստը, Էլցանցը, Հայոռուսգազարդը:

Համայնքային ենթակայության կառույցներ	
մանկապարտեզ	2
արվեստի դպրոց	1
մշակույթի տուն	1
գրադարան	2
հուշարձան	1
Սուրբ Մարիամ աստվածածին եկեղեցի	1

Աղյուսակ 1. Համայնքի ենթակառուցվածքների գնահատում

հ/հ	կառույց	հասցե	Կառուցման տարեթիվ	մակերես ք/մ	Ընդհանուր վիճակը	խնդիրը

1.	համայնքի վարչական շենք	գ.Օձու ն, փ6 շ10	1973	532	մասնակի բարվոք	հարդարում եւ տեխնիկայով համալրում
2.	մշակույթի տուն	Փ.3/2	1973 թ.	1200	մասնակի բարվոք	հարդարման աշխատանքնե րի իրականացում
3	մանկապարտեզ թիվ 1	Փ8/7	1971 թ.	1050	բարեկարգ	վերանորոգվ ել է 2011-12թթ.
4	մանկապարտեզ թիվ 2	Փ6,նրբ. 2/1	1991 թ.	662	մասնակի բարվոք	վերանորոգո ւմ եւ ընդհանուր հարդարում
5.	արվեստի դպրոց	փ5,փա կ.4/10/ 1		Տեղավոր- ված է թիվ 1 միջնակարգ դպրոցի մասնաշեն- քում	ոչ բարվոք	անհրաժեշտ է նոր տիպային շենք
6.	խմելու ջրի ներհամայնք ային ցանց					2011-12թթ. ամբողջու թյամբ փոխվել է, բնակչության 90%-ից ավելին ապահովված է խմելու ջրով
7.	կոյուղու ցանց				կոյուղացված է գյուղի մոտ 50%-ը,	անհրաժեշտ է կոյուղացնել ամբողջ գյուղը
8.	ներհամայնքայի ն ճանապարհներ				ոչ բարվոք, 4-5% է ասֆալտապա	անհրաժեշտ է կոյուղացնել

					տ	ամբողջ գյուղը
9.	գրադարան թիվ 1	մշակույթի տուն			բարվոք	
10.	գրադարան թիվ 2				շենք չունի	անհրաժեշտ է գրադարանի տիպային շենք

3.2. ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խորհրդային տարիներին համայնքում գործել են գյուղմթերքների վերամշակման գործարաններ՝ պանրագործարան, պահածոների գործարան, չրերի արտադրամաս, որտեղ վերամշակվում էին Օձունի եւ շրջակա գյուղերի բնամթերքն ու գյուղմթերքը: Ներկայումս դրանք չեն գործում:

Համայնքում այժմ գործում է չորս փոքր արտադրական ձեռնարկություն՝ քարի վերամշակման 3 փոքր արտադրամաս, մեկ հացի փուռ, ինչպես նաեւ մեկ հանգստյան տուն՝ «Օձուն պանսիոնատը»:

Վերջին տարիներին գյուղում ձեւավորվել է հյուրատնային բիզնեսը՝ մոտ 10 տուն, որոնք ողջ տարին ծառայություններ են մատուցում գյուղ այցելող զբոսաշրջիկներն: Ընտանեկան բիզնեսի այս տեսակն ընդլայնվելու միտում ունի: Փոքր բիզնեսի զարգացմանը, սակայն չի նպաստում հարկային օրենսդրությունը. համայնքում առկա երկու սրճարանները 2012թ.-ին դադարեցրել են իրենց գործունությունը, քանի որ օրենսդրական փոփոխությունները նրանց հնարավորություն չեն տալիս շարունակելու իրենց գործունեությունը:

3.3. ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի հողերն ըստ նշանակության	ՀԱ
համայնքի վարչական տարածքը՝	7879.7

վարելահողեր	1295.8
արոտավայրեր	3012.2
պտղատու այգիներ	-
տնամերձ հողեր	276.9
դաշտային ճանապարհներ	-
գյուղամիջյան փողոցներ	21կմ
սեփականաշնորհված վարելահողեր	1110.3
մեկ հողաբաժնի չափը	0.58
վարձակալությամբ տրված	65.2

3.4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Օձուն համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 5404 հա, որից վարելահողերը՝ 1295 հա, խոտհարքները՝ 339 հա, արոտավայրերը՝ 3012 հա, այլ հողատեսակները՝ 757 հա: Համայնքում հաշվառված են 1450 գյուղացիական տնտեսություններ, որոնց սեփականաշնորհվել է 1110 հա վարելահող, 233 հա խոտհարք: Գյուղացիական տնտեսություններին ոռոգման ջուրը մատակարարում է Լոռի ջրանցք ՋՕԸ, ընդհանուր հողատեսքերի 40%-ը ոռոգվում են:

Օձունի 1295 հա վարելահողերը բարենպաստ են հացահատիկի մշակության համար: Սակայն համայնքի 1100 հա բարձրակարգ վարելահողերից 73%-ը վերածվել է խոտհարքների եւ արոտավայրերի: Այդուհանդերձ, 2012թ.-ին Օձունում 1295 հեկտար վարելահողերից մշակվել է 450 հա-ը, որից 150 հա-ը հացահատիկ՝ ցորեն եւ գարի: Մշակված 450 հա վարելահողերից 100 հա-ը օձունցիները վարձակալությամբ տվել են հարեւան արեւածագցիներին, փաստորեն, օձունցիները մշակում են իրենց վարելահողերի հազիվ 23%-ը:

<u>Խնդիրներ</u>

- նպաստել համայնքում գյուղատնտեսության զարգացմանը,
- համայնք ներկրել որակյալ սերմացու,
- համայնքին ապահովել գյուղատնտեսական տեխնիկայով,

- աջակցել 1200 հողօգտագործողներին վարելահողերը մշակելու հարցում,
- համալրել հակակարկտային կայանների քանակը,
- բարեկարգել դաշտամիջյան ճանապարհները,
- աջակցել բնամթերքի իրացմանը:

3.5. ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Օձունի բնակիչների հիմնական զբաղվածությունը անասնապահությունն է, չնայած դրան, գյուղում չեն ձեւավորվում խոշոր ֆերմերային տնտեսություններ: Համայնքում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը՝ 2095 գլուխ, որից կովեր՝965, ոչխարներ եւ այծեր՝297 գլուխ, խոզեր՝790 գլուխ, կան 6370 թեւ թռչուն, 700 մեղվաընտանիք: Մեկ կովի միջին կաթնատվությունը տարեկան 1800-2000 լ է, որն արտադրողներն օգտագործում են մեծ մասամբ սեփական կարիքների համար: Ցավոք, այն նշանակալի եկամուտ չի ապահովում գյուղացիների համար, քանի որ կաթնամթերքի իրացման խնդիրը լուծված չէ՝ համայնքը չունի կաթ ընդունող կամ վերամշակող ձեռնարկություն: Գյուղացիների պահանջով համայնքի ղեկավարը ներկայումս բանակցում է կաթի մշակությամբ զբաղվող մի ընկերության հետ՝ համայնքում կաթի ընդունման կետ բացելու եւ անհատներից կաթ մթերելու համար:

<u>Խնդիրներ</u>

- կանոնակարգել խոտհարքների եւ արոտավայրերի հասարակական օգտագործումը՝ արգելելով անասունների՝ ժամանակից շուտ մուտքը խոտհարքներ,
- աջակցել բնակչությանը կաթի իրացման խնդիրը լուծելու հարցում:

3.6. ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքի օդային ավազանի վրա բացասաբար են անդրադառնում Ալավերդու պղնձաձուլական գործարանի արտանետումները: Գործարանը շահագործող «ԷյՍիՓի» ընկերությունն օդի աղտոտվածության դիմաց Օձուն համայնքին փոխհատուցում է բնապահպանական վճարներ տրամադրելով, քանի որ գյուղը գտնվում է մինչեւ 1,5 կմ շառավղով պղնձաձուլարանի արտանետումների տարածքում, որը ենթակա է փոխհատուցման:

Աղբահանում, աղբավայրի առկայություն

Աղբահանումն իրականացնելու համար համայնքապետարանն ամեն տարի մրցույթ է հայտարարում, եւ շահող կազմակերպությունն, առաջարկված պայմանների

համաձայն, աղբահանում է իրականացնում համայնքում: Բնակիչներն աղբը տեղադրում են տների առջեւ, որտեղից մեքենան հավաքում է: Համայնքի փողոցներում աղբամաններ չեն: 2008թ.-ին համայնքապետարանը ձեռք է բերել աղբահավաք մեքենա, որը տրամադրվում է մրցույթը շահած կազմակերպությանը՝ աշխատանքերն իրականացնելու համար:
Գյուղում կա փոքրիկ պուրակ, որը բարեկարգման եւ կանաչապատման ահրաժեշտություն ունի:

<u>Խնդիրներ</u>

- աղբամանների տեղադրում համայնքում
- կազմակերպել կանոնակարգված աղբահանություն:

3.7. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ա. ԲՆԱԿԵԼԻ ԵՒ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Գյուղում կա երկու բազմաբնակարան բնակելի շենք՝ հինգ հարկանի եւ երկհարկանի: Շենքերի պահպանումն իրականացնում է համայնքնապետարանը: 2012թ. համայնքապետարանը վերանորոգել է շենքի տանիքը: Գյուղում հաշվառված են գյուղատնտեսական տնտեսություններ՝ առանձնատների քանակը՝ 1450, որոնց սպասարկումն իրականացնում են սեփականատերերը:

Բ. Բնակարանային, կոմունալ տնտեսություն

Համայնքի բնակչության 90%-ն ապահովված է խմելու ջրով, խմելու ջրի ներքին ցանցը 2011-12թթ.-ին ամբողջությամբ փոխվել է: Խմելու ջրի սպասարկումն իրականացնում է Հայջրմուղկոյուղի ՓԲԸ-ի կողմից: Գյուղի մոտ 30% կոյուղացված է, անհրաժեշտ է աշխատանքներ իրականացնել ողջ գյուղը կոյուղու ցանցին միացնելու համար: Քանի որ Օձունը տեղադրված է արեւմուտքից արեւելք ընկած թեքության վրա, այդ պատճառով անձրեւաջրերի, սելավաջրերի ու կեղտաջրերի վերից վար հոսքը քայքայել եւ քշել-տարել է ասֆալտի ամբողջ ծածկույթը: Ներկայումս ամբողջությամբ քայքայվել եւ շարքից դուրս է եկել ասֆալտապատ ճանապարհահատվածը: Ասֆալտապատված է գյուղամիջից եկեղեցի տանող ճանապարհը:
Միջհամայնքային եւ ներհամայնքային ճանապարհները գտնվում են անմխիթար վիճակում, դրանք անձրեւային եղանակից հետո անանցանելի է դառնում: Հատկապես վատ վիճակում են ներհամայնքային ճանապարհները, փողոցների 2-3 %-ն է ասֆալտապատված: Գյուղամիջյան՝ Օձունի եկեղեցի տանող ճանապարհն ասֆալտապատվել է 2011թ.-ին, իսկ 2012թ.-ին ասֆալտապատվել է գերեզմանոց տանող ճանապարհը՝ 500 մ: Հիմնանորոգվել է 4-րդ փողոցը՝ ջրագծերի կառուցումից հետո: Ամեն տարի հարթեցման ու փոսալցման աշխատանքներ են իրականացվում

արոտավայրեր տանող ճանապարհներին: 2013թ.-ին նախատեսվում է հիմնանորոգում եւ ասֆալտապատում իրականացնել 1-ին փողոցում, որը միջնակարգ դպրոցներ տանող ճանապարհն է:
Գյուղը չունի գիշերային լուսավորություն:

<u>Խնդիրները</u>

- ներհամայնքային ճանապարհների բարեկարգում
- արոտավայրեր տանող ճանապարհների հարթեցում եւ փոսալցում
- 2013թ.-ին համայնքի 1-ին փողոցի հիմնանորոգում եւ ասֆալտապատում
- իրականացնել ճանապարհների բարեկարգում եւ ասֆալտապատում
- ճանապարհամերձ առուների մաքրում եւ վերականգնում
- սելավատարների մաքրում
- գիշերային լուսավորության ցանցի հիմնում:

3.8. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ

Համայնքը տրանսպորտային տնտեսություն չունի եւ համայնքի բնակչության ուղեւորափոխադրումը, հիմնականում, կատարվում է սեփական մեքենաներով: Համայնքի բնակչության կապը Վանաձոր մարզկենտրոնի եւ մարզի Ալավերդի, Ստեփանավան քաղաքների հետ իրականացվում է ավտոբուսներով: Ալավերդի քաղաքի հետ ուղեւորափոխադրումն իրականացվում է օրական 5 անգամ: Օձուն համայնքով է անցնում նաեւ Վանաձոր գնացող ավտոբուսը, օրական երկու անգամ բնակչությունը հնարավորություն ունի օգտվելու նաեւ Օձուն-Ստեփանավան ավտոբուսից:
Գյուղում Վիվասել ,Արմենթել, Օրանժ հեռախոսային օպերատորները; Գործում է Արմենթելի ներտնային հեռախոսակապը:

3.9. ԱՌԵՒՏՈՒՐ ԵՒ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում գործում են առեւտրի 30 խանութ-կրպակներ, բնակչության պարենային եւ ոչ պարենային ապրանքների սպասարկումը կատարվում է դրանց միջոցով: Գյուղի նորաստեղծ երկու սրճարաններն իրենց գործունեությունը դադարեցրել են 2012թ.-ին՝ հարկային պարտավորությունների անհամապատասխանության պատճառով:

Խնդիրներ

- սպասարկման ծառայությունների գործունության ընդլայնում եւ բարելավում,
- հանգստյան եւ տուրիստական բնակավայրին բնորոշ ենթակառույցների հիմնում:

3.10. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գործում է երկու մանկապարտեզ: Մանկապարտեզները վերանորոգվել են, ձեռք է բերվել նորագույն կենցաղային տեխնիկա եւ խոհանոցային կահույք:

Արվեստի դպրոց

Արվեստի դպրոցում սովորում է մոտ 100 աշակերտ, գործում են երաժշտական տարբեր գործիքների՝ դաշնամուրի, ջութակի դասարաններ եւ ժողգործիքներ՝ շվի, քանոն, նկարչության եւ պարի խմբակներ:

Օձուն համայնքի արվեստի դպրոցը տիպային շինություն չէ, այն ներկայումս տեղակայված է Օձունի թիվ 1 հանրակրթական դպրոցին պատկանող շենքում, որը դպրոցի ուսուցիչների համար կառուցված հանրակացարան է եղել: Շինությունը չափերով շատ փոքր է եւ չի համապատասխանում արվեստի դպրոցի չափանիշներին. դասարանների քանակը քիչ է, դասավորվածությունը նախատեսված չէ արվեստի դպրոցի համար, դասարանները ձայնամեկուսացված չեն եւ այլն: Շենքը շատ խոնավ է, որի հետեւանքով հատակը բորբոսնել է եւ լուրջ վտանգ է իրենից ներկայացնում դպրոցի սաների եւ ուսուցիչների առողջության համար: Երեխաներից շատերը հաճախակի հիվանդանում են եւ այդ պատճառով բացակայում են դասապրոցեսից, չնայած այն բանին, որ ձմռանը գործում է կենտրոնացված ջեռուցման համակարգ: Համայնքն ունի շենքային հնարավորություն՝ Օձունի թիվ 1 մանկապարտեզի մասնաշենքերից մեկը վերակառուցելուց հետո կարող է ծառայել որպես արվեստի դպրոց:

Համայնքում գործում է նաեւ երկու միջնակարգ դպրոց: Դպրոցները վերանորոգված են եւ գտնվում են բարվոք վիճակում: Այլ է դպրոցների մարզադահլիճների եւ մարզահրապարակների վիճակը: Դպրոցների վերանորոգման ժամանակ մարզադահլիճները դուրս են մնացել ծրագրից եւ խնդիր է առաջացել ամբողջությամբ վերանորոգել մարզադահլիճները, ձեռք բերել մարզական գույք:

Խնդիրներ

- Օձունի թիվ 1 մանկապարտեզի մասնաշենքերից մեկը վերակառուցել արվեստի դպրոցի,
- ստեղծել ուսուցման բարենպաստ պայմաններ արվեստի դպրոցի սաների համար,
- սպասք եւ անկողնային պարագաների ձեռք բերում,
- մահճակալների, պահարանների, խաղալիքների ձեռք բերում:

3.11. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գործում է մեկ բուժամբուլատորիա, որն առաջին բուժօգնություն է ցուցաբերում բնակչությանը, իսկ հիվանդանոցային բուժումն իրականացվում է Ալավերդիում: Բուժամբուլատորիան կառուցվել է 2000թ., բարեկարգ է, ապահովված է շտապօգնության մեքենայով:

3.12. ՄՇԱԿՈՒՅԹ

Օձունում գոյություն ունեցող մշակութային միակ կառույցը մշակույթի տունն է: Այն կառուցվել է 1950թ.-ին, շենքն, ընդանուր առմամբ, բարեկարգ վիճակում է, սակայն հարդարման աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտություն ունի:
Գյուղում առկա եկեղեցիները պատկանում են Գուգարաց թեմին: Եկեղեցիներից Օձունը գործող եկեղեցի է, ունի երգչախումբ, հոգեւոր առաջնորդներն զբաղվում են երիտասարդների հոգեւոր դաստիարակությամբ: Երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարակությանը նպաստելու համար համայնքապետարանն անհրաժեշտ է համարում վերականգնել Հաղթանակի օրվան նվիրված տոնակատարությունները, կազմակերպել այցելություններ Հայրենական Մեծ պատերազմում զոհված օձունցիների հուշարձանին, հարգանքի տուրք մատուցել նաեւ արցախյան հերոսամարտում ընկած օձունցիների հիշատակին:

<u>Խնդիրներ</u>

- մշակույթի տան վերանորոգում,
- մշակութային միջոցառումներով աշխուժացնել գյուղի մշակութային կյանքը,
- բացել մշակութային տարբեր խմբակներ՝ երեխաների բազմակողմանի զարգացումն ապահովելու նպատակով,
- նշել եկեղեցական ավանդական տոները,

- կազմակերպել մշակութային միջոցառումներ՝ հրավիրելով արվեստագետների, երգի, պարի եւ թատերական խմբերի:

3.13. ՍՊՈՐՏ

Համայնքը չունի մարզահամալիր, դպրոցների դահլիճներն անգամ չունեն մարզադահլիճներ: Գյուղի ֆուտբոլի դաշտը նույնպես չի համապատասխանում պահանջվող չափանիշներին (որակազրկված է), որի պատճառով անգամ ներհանրապետական մրցումներն են արգելված: Ըստ Ֆուտբոլի ֆեդերացիայի չափորոշիչների՝ դաշտը պետք է ունենա ցանկապատ, հանդերձարան, զուգարան եւ դաշտի հարթ պաստառ: Հին ստադիոնում անց են կացվել բազմաթիվ տեղական եւ միջմարզային մրցաշարեր: Ֆուտբոլը հիմնական եւ կարեւորագույն սպորտաձեւն է, որով տարիներ շարունակ զբաղվել են գյուղի պատանիները եւ երիտասարդները: Համայնքի մարզական կյանքն աշխուժացնելու, երիտասարդության ֆիզիկական պատրաստականությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է կառուցել մարզահամալիր, բարեկարգել ֆուտբոլի դաշտը, կառուցել բասկետբոլի, վոլեյբոլի մարզադաշտերը, նաեւ՝ հիմնել շախմատի դպրոց: Օձուն համայնքի դեռահասները եւ երիտասարդները զրկված են որեւէ սպորտաձեւով զբաղվելու հնարավորությունից, վտանգված է գյուղի միակ մարզական՝ ֆուտբոլի թիմի գործունեությունը:

<u>Խնդիրները</u>

- մարզահամալիրի կառուցում,
- ֆուտբոլի մարզադաշտի կառուցում,
- բասկետբոլի, վոլեյբոլի մարզադահլիճների կառուցում,
- մարզագույքի ձեռքբերում,
- շախմատի դպրոցի հիմնում,
- նախաձեռնել միջոցառումներ՝ գյուղի մարզական կյանքն աշխուժացնելու եւ երիտասարդության ժամանցը կազմակերպելու ուղղությամբ,
- մարզաձեւերի խմբակների հիմնում:

3.14. ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ .ՏՈՒՐԻԶՄ

Օձունի գեղեցկատես բնությունը եւ հինավուրց եկեղեցիների առկայությունը գյուղին Լոռու զբոսաշրջային գոտում ներառելու լիիրավ հնարավորություն է տալիս: Օձունը, շնորհիվ գյուղում գտնվող 5-րդ դարի եկեղեցու, մշտապես եղել է ուխտատեղի եւ զբոսաշրջիկների ուշադրության կենտրոնում: Մեծ թվով

օտարերկրացիներ ամեն տարի այցելում են Օձուն՝ առաջին դարի քրիստոնեական սրբավայրը տեսնելու: Ըստ ավանդույթի՝ առաջին դարում Թովմաս առաքյալը եկել է Օձուն եւ եկեղեցու վայրում օծել քահանաների ու եպիսկոպոսների: Օձուն անունն էլ ստացել է հենց «օծել» բառից: Եկեղեցու տեղում, դեռեւս չորրորդ դարում Գրիգոր Լուսավորիչն ու Տրդատ 3-րդ թագավորը կառուցել են միանավ բազիլիկ եկեղեցի, որը հետագայում քանդվել է երկրաշարժից եւ միայն վեցերորդ դարում կառուցվել է ներկայիս եկեղեցին: Այստեղ պահպանվել են չորրորդ դարի քսանից ավելի քանդակներ, որոնք համաշխարհային արժեք ունեն:

Դեռեւս միջնադարից Օձունը հայտնի է նաեւ շնորհիվ նշանավոր հայոց կաթողիկոս Հովհան Օձնեցի Իմաստասերի (717-728թթ): 1999թ.-ին Օձունի գյուղամիջում տեղադրվեց մեծն Օձնեցու արձանը: Վերջին տարիներին բազմաբնույթ աշխատանքներ են կատարվում ուղղված պատմամշակութային արժեքների պահպանմանն ու վերականգնմանը: Այժմ գործում է Օձունի «Սուրբ Մարիամ աստվածածին» եկեղեցին: Ընթացքի մեջ են եկեղեցու վերանորոգման աշխատանքները, որի համար եռամյա ծրագրով կծախսվի մոտ 320 մլն դրամ:

Գյուղում գործում է «Օձուն պանսիոնատ» հանգստյան տունը, որը գտնվում է անտառի փեշին՝ «Կենդանարար» կոչվող բարձունքում: Հանգստյան տունն ունի հիմնական մասնաշենք եւ քոթեջներ, առանձին սրճարան, բիլիարդի սրահ, լողավազան, ապահովված է մշտական տաք եւ սառը ջրով, աչքի է ընկնում բարձրակարգ սպասարկմամբ: «Օձուն պանսիոնատը» գործում է ողջ տարին:

Գյուղում արդեն գործում են անհատական հյուրատներ, համայնքի բարեկարգումն ու սպասարկման ենթակառույցների առկայությունը ե՛ւ տեղացի հանգստացողների, ե՛ւ օտարերկրացի զբոսաշրջիկների հոսքն ավելացնելու լիիրավ հնարավորություն են ստեղծում: Տուրիզմի զարգացումը համայնքում սոցիալական խնդիրները լուծելու լավագույն հնարավորություններից մեկն է. այն կարող է նպաստել հանգստյան տների, հյուրատների, սպասարկման ծառայությունների գործունության ընդլայնմանը:

<u>Խնդիրները</u>

- հրատարակել տեղեկատվական բուկլետներ եւ համայնքի պատմամշակութային արժեքները ներկայացնող կատալոգ,
- համայնքում հիմնել զբոսաշրջությանը նպաստող ենթակառույցներ,
- փոքր եւ միջին բիզնեսի զարգացման համար բարենպաստ միջավայրի ապահովում եւ հարկային քաղաքականության վարում,
- բարելավել հյուրընկալման ծառայությունների որակը, թաղամասերը, զբոսաշրջային կառույցները եւ ենթակառույցները,

- խրախուսել մասնավոր հատվածի մասնակցությունը զբոսաշրջության ոլորտում,
- ակտիվացնել մշակութային միջոցառումները,
- բարեկարգել համայնքը՝ զբոսաշրջային գրավչությունները պահպանելու նպատակով:

3.15. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մոտ 100 օձունցիներ մինչ այժմ աշխատում էին Ալավերդու «Արմենիա Քափր Փրոգրամ» ՓԲ ընկերությունում, սակայն համաշխարհային տնտեսական ճգնաժամի շրջանում՝ 2009-10թթ.-ին, նրանց թիվը կրճատվեց: Գյուղում եւ տարածաշրջանում չկան այլ աշխատատեղեր: Օձունցիների մի մասը՝ մոտ 1000 մարդ, գարնան գալուն պես մեկնում է արտագնա աշխատանքի եւ աշնան վերջերին վերադառնում:
Համայնքի սոցիալապես անապահով 140 ընտանիք ներառված է նպաստների համակարգում՝ բազմազավակ, միայնակ տարեցներ, հաշմանդամներ, զոհված ազատամարտիկների ընտանիքներ: Համայնքապետարանը սեփական բյուջեից սոցիալական աջակցություն է ցուցաբերում ուսանողներին՝ վճարելով նրանց ուսման վարձը բուհին: Համայնքի բյուջեից միանվագ օգնություն է հատկացվում նորածիններին՝ 10 հազար դրամ, իսկ անհատական դիմումներով հատկացվում է մինչեւ 25 հազար դրամ:
Բնակչության մոտ 10 տոկոսը զբաղված է մասնավոր և պետական սեկտորներում:

4. ՀԱՄԱՅԱՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

<u>Ռազմավարությունը</u>
Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով, ինչպես նաեւ ներգրավելով տարբեր ֆինանսական միջոցներ՝ հետեւողականորեն եւ տարեցտարի բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային եւ հոգեւոր պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ, լուսավոր ու բարեկեցիկ բնակավայր:

4.1. Տեղական ինքնակառավարում.

Օձուն համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձեւավորված տեղական իշխանությունները՝ համայնքապետն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 7

անդամներով: Օձուն համայնքի ղեկավարի աշխատակազմում ներգրավված են 13 համայնքային ծառայողներ, որից 5-ը՝ հայեցողական:

Ա. Օձունի համայնքապետարանի կառուցվածքը

- Համայնքապետ
- Համայնքապետի տեղակալ
- Համայնքապետի խորհրդական
- Աշխատակազմի քարտուղար
- **12 համայնքային ծառայողներ:**

Համայնքապետարանի գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը

Համայնքապետարանն ունի երկհարկանի վարչական շենք, որը մասնակի վերանորոգվել է, սակայն շենքն ամբողջությամբ բարեկարգման եւ գույքով համալրելու անհրաժեշտություն ունի: Աշխատակազմն ապահովված է աշխատանքներն իրականացնելու համար բավարար աշխատանքային պայմաններով, համակարգչային տեխնիկայով: Սակայն այն դեռեւս բավարար չէ ՏԻՄ օրենսդրությամբ սահմանված գործառույթների լիարժեք իրականացման համար: Մասնավորապես, համայնքի ավագանին ապահովված չէ աշխատանքային պայմաններով՝ չունի աշխատասենյակ բնակչությանն ընդունելու եւ օրենքով նախատեսված այլ պարտավորություններ իրականացնելու համար:

Օձուն համայնքը չունի պաշտոնական կայք, որով հանրությանը կիրազեկի ՏԻՄ օրենքով պարտադիր համարվող իր գործառույթների իրականացման մասին: Համայնքում տեղադրված չեն նաեւ տեղեկատվական ցուցատախտակներ, որը համաձայն ՏԻՄ օրենքի՝ պետք է տեղադրվի յուրաքանչյուր 2000 բնակչի հաշվով՝ համայնքապետի եւ քաղաքի ավագանու կայացրած որոշումները հրապարակելու, համայնքապետի աշխատակազմի գործունեության հրապարակայնությունն ապահովելու համար: Այդ իսկ պատճառով բնակչության իրազեկվածությունը քաղաքային իշխանության գործունեության մասին չափազանց ցածր է, որը չի նպաստում համայնքային իշխանություն-բնակչություն վստահության աճին:

<u>Խնդիրներ</u>

- համայնքի պաշտոնական կայքի ստեղծում,
- տեղեկատվական ցուցատախտակների տեղադրում,
- վարչական շենքի վերանորոգում,

- գույքով եւ տեխնիկայով համալրում:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սույն վերլուծությունը ներկայացնում է համայնքում առկա ենթակառուցվածքների, ռեսուրսների, տնտեսական և սոցիալական տարբեր ոլորտների ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու ռիսկերը: Այն նպատակ է հետապնդում վերհանել առկա հիմնական խնդիրներն ու գնահատել համայնքի զարգացման հնարավորություններն ու ուղղությունները:

4.1. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- գյուղը անտառներով շրջապատված լինելը,
- առողջարանային հանգստի վայր լինելը,
- Օձունի պատմական եկեղեցու առկայությունը,
- կրթական հաստատությունների առկայությունը:

4.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- ճանապարհների անբարեկարգ վիճակը,
- հնացած արտադրական միջոցներ,
- գործազրկության բարձր մակարդակը,
- աղքատության մեծ տոկոսը,
- աշխատուժի արտագաղթը,
- նյութատեխնիկական բազայի բացակայությունը,
- բժշկական նորագույն տեխնիկայի բացակայությունը,
- հեռախոսային ցանցի բացակայությունը:

4.3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ձեռք է բերվել 2 կոմբայն, Т-250 և Т-75 մակնիշի տրակտորներ,
- վերանորոգվել է Օձունի Եզնանիստ հանդամասի 800 մետր երկարությամբ ոռոգման ցանցը
- տեղադրվել է մեկ հակակարկտային կայան:

- համայնքային սեփականություն համարվող՝ նախկին <<Մոր և Մանկան>> առողջարանի 1 սենյականոց և 3 սենյականոց բնակարանի սեփականաշնորհումը իրականացնել 2013թ.ին:
- համայնքային սեփականություն համարվող , կադաստրային քարտեզի 460-001 ծածկագրով 5.68 հա գյուղ.-արտադրական նշանակության հողամասից, համայնքի զարգացման ծրագրերը հաշվի առնելով, օտարել ամեն տարի 1հա՝ 2013-2016թթ ընթացքում 4հա գյուղ. արտադրական ենթակառույցները զարգացնելու նպատակով:

4.4. ՀԱՄԱՅՔԻՆ ՎՏԱՆԳ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի բնակչության համար առկա է քարաթափման վտանգը. գյուղ տանող ճանապարհին գտնվող ժայռերից քարաթափումն անընդհատ պրոցես է:

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

5.1. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում եւ կանխատեսում:

Համայնքի բյուջեն

Համայնքի բյուջեր եկամտային մասը ըստ հոդվածների հազար դրամ

		2009	2010	2011	2012
1	Գույքահարկ շենքերի և շինությունների համար		120.0	112.6	209.9
2	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	4196.36	3961.45	3638.13	4194.7
3	Հողի հարկ	1767.05	20261.93	18937.4	16081.5
4	Տեղական տուրքեր	380.0	410.0	500.0	533.0
5	Պարտադիր վճարներ	-	-	-	-
6	Դոտացիաներ պետական բյուջեից	57345.6	56325.2	57958.6	61188.2
7	Սուբվենցիաներ պետական բյուջեից	8961.2	9006.0	19021.0	23567.2

8	Գույքի վարձակալությունից եկամուտներ	120.0	90.0	100.0	100.0
9	Տեղական վճարներ	183.0	-	-	-
10	Մուտքեր տույժերից, տուգանքներից	2996.7	100.0	180.0	210.0
11	Այլ եկամուտներ	1401.86	1523.31	1415.0	488.0
12	Պակասորդի ֆինանսավորման աղբյուր	-	-	-	29140.0
	Ընդամենը եկամուտներ	94880.93	93950.0	141380.0	113244.08

Համայնքի բյուջեր ծախսային մասը ըստ հոդվածների

հազար դրամ

		2009	2010	2011	2012
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	150,0	150,0	150,0	200,0
2	Տնտեսական հարաբերություններ			5000,0	159,0
3	Շրջակա միջավայրի պաշտպանություն	9006,0	9006,0	19600,0	23567,2
4	Կոմունալ ծառայություն	3500,0	3780,0	5000,0	6499,0
5	Առողջապահություն				
6	Հանգիստ	460,0	2824,8	1906,1	1922,0
7	ընդամենը	13116.0	15760.8	31656.1	32347.2

5.2. Օձուն համայնքի առաջիկա 4 տարիներին իրականացվելիք միջոցառումների սահմանում եւ տարեկան միջոցառումների պլանավորում

Աղյուսակ

ծրագիրը	Կատարողը	Ա կնկալվող Արդյունքը	համակատարողը	ժամկետը	Ֆինանսական ապահովումը
դպրոց տանող ճանապարհի կապիտալ նորոգում	Օձունի համայնքապետարան	2Կմ բարեկարգված ճանապարհ	Համայնքա-պետարան	2013թ.-2015թթ	80 մլն դրամ համայնքային բյուջե
լուսակետերի տեղադրում	Օձունի համայնքապետարան	150 հատ լուսակետե-րի տեղա-դրում՝ գիշե-րային լուսա-վորություն	ՀՀ կառավարություն Հրատապ ծրագրից	2013թ.	15 մլն դրամ
գրադարանի համալրում նոր գրքերով	Օձունի համայնքապետարան	20 նոր հրատարակություն յուրաքանչյուր տարի	Համայնքա-պետարան	2013-2016թթ.	1մլն դրամ Համայքային բյուջե
Համայնքապե տարանի գույքի թարմացում	Օձունի համայնքապետարան	կահույք, համակարգիչ, տեղեկատվ. ցուցատախտակ	Համայնքա-պետարան	2013-2016թթ.	2մլն դրամ Համայքային բյուջե
մանկապարտեզի հիմնանորոգում թ2	Օձունի համայնքապետարան	Սենքերի վերանորո-գում	Համայնքա-պետարան	2013-2016թթ.	4մլն դրամ Համայքային բյուջե

մանակապարտեզի կապիտալ նորոգում	Օձունի համայնքապետարան	Թիվ 1 մանկապարտեզի մի մասնաշենքը ձևափոխել և հարմարեցնել արվեստի դպրոցի	ՀՀ կառավարություն	2013թ	40 մլն դրամ ՀՀ կառավարություն
ներհամայնքային ճանապարհների բարեկարգում	Օձունի համայնքապետարան	5 կմ ներհամայնքային ճանապարհների բարեկարգում	Համայնքապետարան	2013-2016թթ.	15մլն դրամ Համայքային բյուջե
Սելավատարների մաքրում	Օձունի համայնքապետարան	4 կմ ներհամայնքային սելավատարների մաքրում	Համայնքապետարան	2013-2016թթ	5մլն դրամ Համայքային բյուջե
Մշակույթի տան վերանորոգում	Օձունի համայնքապետարան	Սենքերի կոսմետիկ նորոգում	Համայնքապետարան	2013-2016թթ	4մլն դրամ Համայքային բյուջե
Համայնքային կենտրոնի կոսմետիկ նորոգում	Օձունի համայնքապետարան	Սենքերի և դահլիճի կոսմետիկ նորոգում	Համայնքապետարան	2013-2016թթ	2մլն դրամ Համայքային բյուջե
Մարի ճանապարհի նորոգում	Օձունի համայնքապետարան		Համայնքապետարան	2013-2016թթ	5մլն դրամ Համայքային բյուջե

Աղբատար մեքենայի ձեռք բերում	Օձունի համայնքապետարան	1 աղբատար մեքենայի ձեռքբերում	Համայնքա-պետարան	2015թ	15մլն դրամ Համայքային բյուջե
Գյուղ գործիքների ձեռքբերում	Օձունի համայնքապետարան	Գյուղատնտեսության զարգացում	Համայնքա-պետարան	2013թ	3մլն դրամ Համայքային բյուջե
Սպորտ համալիրի կառուցում	Օձունի համայնքապետարան	Մատաղ սերնդի մարզավի-ճակի և զբաղվածու-թյան հիմնախնդրի լուծում	ՀՀ կառավարություն	2013-2016թթ	120մլն ՀՀ կառավարություն